ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-600-29.05.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածում լրացնել նոր հասկացություն հետևյալ բովանդակությամբ.

«***Գործարար համբավ՝*** գործարարության ոլորտում դրսևորած ձեռնարկատիրական գործունեության, աշխատանքային և մասնագիտական որակներին տրվող գնահատական»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում լրացնել նոր 7-18-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«7. Թույլատրելի առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով դեպի Տրանսպորտի Նախարարների Եվրոպական Կոնֆերանսի (ՏՆԵԿ) անդամ պետություններ միջպետական բեռնափոխադրումներ (բացառությամբ ոչ առևտրային փոխադրումների) իրականացնող կազմակերպությունները պետք է ապահովեն Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների Որակի Խարտիայով (այսուհետ՝ Որակի Խարտիա) նախատեսված գործարար համբավի, ֆինանսական վիճակի և փոխադրումների մենեջերի համար սահմանված պահանջները:

8. Միջպետական փոխադրողը պետք է նշանակի փոխադրումների կազմակերպման և անվտանգության գծով պատասխանատու անձ (այսուհետ՝ փոխադրումների մենեջեր), որը կարող է լինել նաև կազմակերպության ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը:

9. Փոխադրումների մենեջերը պետք է ունենա մասնագիտական որակավորումը հաստատող վկայական, որը տրվում է տեսական քննության դրական արդյունքի դեպքում: Բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում վերջին 10 տարվա անընդմեջ կառավարման ստաժ ունեցող անձանց մասնագիտական որակավորումը հաստատող վկայականը տրվում է առանց տեսական քննություն հանձնելու: Մասնագիտական որակավորմանը և մասնագիտական որակավորման քննություններին ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը և մասնագիտական

որակավորման վկայական տալու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10. Փոխադրումների մենեջերը կարող է միաժամանակ կազմակերպել թվով մինչև չորս տարբեր կազմակերպությունների փոխադրումների գործընթացը, եթե դրանց տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակը չի գերազանցում հիսուն միավորը: Փոխադրումների մենեջերի կողմից միայն մեկ կազմակերպության փոխադրումների գործընթացը կազմակերպելու դեպքում տրանսպորտային միջոցների քանակը չի սահմանափակվում:

11. Փոխադրումների մենեջերների մասնագիտական վերապատրաստման գործունեություն կարող են իրականացնել <<Գործունեության իրականացման ծանուցման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան լիազոր մարմնից ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ստացած կազմակերպությունները:

12.ՏՆԵԿ անդամ պետություններ միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունը պետք է <<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան հաշվառված լինի պետական միասնական գրանցամատյանում և ունենա գործարար համբավ: ՏՆԵԿ անդամ պետություններ միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների գործարար համբավին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

13.Կազմակերպությունը կորցնում է գործարար համբավը, եթե դատարանի որոշմամբ սնանկ է ճանաչվել, կամ փոխադրումների գործունեությանն առնչվող խախտումների համար կազմակերպությունը կամ նրա փոխադրումների մենեջերը ենթարկվել է քրեական կամ վարչական պատասխանատվության: Կազմակերպության գործարար համբավը վերականգնվում է, եթե խախտումների համար սահմանված վարչական տույժերի կատարումն ավարտված է, կամ օրենսդրությամբ սահմանված կարգով դատվածությունը մարված կամ վերացված է:

14. Գործարար համբավի կորստին հանգեցնող փոխադրումների գործունեությանն առնչվող խախտումների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

15. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված գործարար համբավի կորստի, ֆինանսական վիճակի և փոխադրումների մենեջերի համար սահմանված պահանջների խախտման դեպքում միջպետական փոխադրումներ իրականացնելու թույլտվություններ ստանալու կազմակերպության դիմումները մերժվում են, իսկ կազմակերպությանը տրամադրված ՏՆԵԿ թույլտվությունները կասեցվում են լիազոր մարմնի կողմից, մինչև կազմակերպության կողմից խախտումների վերացումը:

16. Որակի Խարտիայով սահմանված փոխադրումների մենեջերի, այդ թվում՝ նրա փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմնին միջպետական

բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունը ներկայացնում է նրա հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում:

17.Որակի Խարտիայով նախատեսված ֆինանսական վիճակին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը կազմակերպությունը լիազոր մարմնին ներկայացնում է վերջին հաշվետու տարվա տարեկան հաշվեկշռի ձևաչափով յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 30-ը: Եթե վերջին հաշվետու տարվա տարեկան հաշվեկշռով կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատելիս Որակի Խարտիայով նախատեսված ֆինանսական վիճակի սահմանված պահանջը չի բավարարվում, որպես լրացուցիչ ֆինանսական միջոցներ կարող են հաշվի առնվել նաև կազմակերպության ակտիվները, շրջանառու կապիտալը, գործունեության պատասխանատվության ապահովագրությունը, ինչպես նաև բանկային երաշխիքը:

18. Սույն հոդվածի 9-րդ մասում սահմանված մասնագիտական որակավորման քննությունների ընդունման և մասնագիտական որակավորման վկայականներ տալու գործընթացը կազմակերպում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածում լրացել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդները պետք է ունենան մասնագիտական որակավորման վկայական (ՄՈՎ): ՄՈՎ ստանալու համար վարորդները պետք է անցնեն նախնական մասնագիտական վերապատրաստում և հանձնեն մասնագիտական որակավորման քննություն: ՄՈՎ ունեցող վարորդներն առնվազն հինգ տարին մեկ պարբերականությամբ պետք է անցնեն մասնագիտական վերապատրաստման դասընթաց, որի վերաբերյալ պետք է նշում կատարվի ՄՈՎ-ի վրա: Մասնագիտական որակավորման քննությունն ընդունում և վարորդի ՄՈՎ-ը տրամադրում է լիազոր մարմինը: Միջպետական փոխադրումներ իրականացնող վարորդների մասնագիտական վերապատրաստմանը ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման քննությունների հանձման կարգը և մասնագիտական որակավորման վկայականին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդների մասնագիտական վերապատրաստման գործունեություն կարող են իրականացնել <<Գործունեության իրականացման ծանուցման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան լիազոր մարմնից ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ստացած կազմակերպությունները:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված վերապատրաստման առաջին դասընթացը վարորդը պետք է անցնի ոչ ուշ, քան ՄՈՎ-ը ստանալուց հինգ տարի հետո:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 7-10-րդ, 12-18-րդ մասերի և 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող նոր 4-րդ և 6-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ օրենքի 2-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 11-րդ մասը և 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասը ուժի մեջ են մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ օրենք) 4-րդ հոդվածում լրացնել նոր հասկացություն հետևյալ բովանդակությամբ.

«***Գործարար համբավ՝*** գործարարության ոլորտում դրսևորած ձեռնարկատիրական գործունեության, աշխատանքային և մասնագիտական որակներին տրվող գնահատական»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում լրացնել նոր 7-18-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«7. Թույլատրելի առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով դեպի Տրանսպորտի Նախարարների Եվրոպական Կոնֆերանսի (ՏՆԵԿ) անդամ պետություններ միջպետական բեռնափոխադրումներ (բացառությամբ ոչ առևտրային փոխադրումների) իրականացնող կազմակերպությունները պետք է ապահովեն Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների Որակի Խարտիայով (այսուհետ՝

Որակի Խարտիա) նախատեսված գործարար համբավի, ֆինանսական վիճակի և փոխադրումների մենեջերի համար սահմանված պահանջները:

8. Միջպետական փոխադրողը պետք է նշանակի փոխադրումների կազմակերպման և անվտանգության գծով պատասխանատու անձ (այսուհետ՝ փոխադրումների մենեջեր), որը կարող է լինել նաև կազմակերպության ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը:

9. ~~Փոխադրումների մենեջերը պետք է ունենա մասնագիտական որակավորումը հաստատող վկայական, բացառությամբ բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում անընդմեջ 10 տարվա կառավարման ստաժ ունեցող անձանց: Մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը և մասնագիտական որակավորման վկայական տալու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

Փոխադրումների մենեջերը պետք է ունենա մասնագիտական որակավորումը հաստատող վկայական, որը տրվում է տեսական քննության դրական արդյունքի դեպքում: Բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում վերջին 10 տարվա անընդմեջ կառավարման ստաժ ունեցող անձանց մասնագիտական որակավորումը հաստատող վկայականը տրվում է առանց տեսական քննություն հանձնելու: Մասնագիտական որակավորմանը և մասնագիտական որակավորման քննություններին ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը և մասնագիտական որակավորման վկայական տալու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10. Փոխադրումների մենեջերը կարող է միաժամանակ կազմակերպել թվով մինչև չորս տարբեր կազմակերպությունների փոխադրումների գործընթացը, եթե դրանց տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակը չի գերազանցում հիսուն միավորը: Փոխադրումների մենեջերի կողմից միայն մեկ կազմակերպության փոխադրումների գործընթացը կազմակերպելու դեպքում տրանսպորտային միջոցների քանակը չի սահմանափակվում:

11. Փոխադրումների մենեջերների մասնագիտական վերապատրաստման գործունեություն կարող են իրականացնել <<Գործունեության իրականացման ծանուցման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան լիազոր մարմնից ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ստացած կազմակերպությունները:

12.ՏՆԵԿ անդամ պետություններ միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունը պետք է <<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան հաշվառված լինի պետական միասնական գրանցամատյանում և ունենա գործարար համբավ: ՏՆԵԿ անդամ պետություններ

միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների գործարար համբավին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

13.Կազմակերպությունը կորցնում է գործարար համբավը, եթե դատարանի որոշմամբ սնանկ է ճանաչվել, կամ փոխադրումների գործունեությանն առնչվող խախտումների համար կազմակերպությունը կամ նրա փոխադրումների մենեջերը ենթարկվել է քրեական կամ վարչական պատասխանատվության: Կազմակերպության գործարար համբավը վերականգնվում է, եթե խախտումների համար սահմանված վարչական տույժերի կատարումն ավարտված է, կամ օրենսդրությամբ սահմանված կարգով դատվածությունը մարված կամ ~~հանված~~ վերացված է:

14. Գործարար համբավի կորստին հանգեցնող փոխադրումների գործունեությանն առնչվող խախտումների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

15. ~~Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված գործարար համբավի կորստի, ֆինանսական վիճակի և փոխադրումների մենեջերի համար սահմանված պահանջների խախտման դեպքում միջպետական փոխադրումներ իրականացնելու թույլտվություններ ստանալու կազմակերպության դիմումները մերժվում են, իսկ կազմակերպությանը տրամադրված ՏՆԵԿ թույլտվությունները կասեցվում են լիազոր մարմնի կողմից, մինչև կազմակերպության կողմից գործարար համբավի կորստին հանգեցնող խախտումների վերացումը:~~

Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված գործարար համբավի կորստի, ֆինանսական վիճակի և փոխադրումների մենեջերի համար սահմանված պահանջների խախտման դեպքում միջպետական փոխադրումներ իրականացնելու թույլտվություններ ստանալու կազմակերպության դիմումները մերժվում են, իսկ կազմակերպությանը տրամադրված ՏՆԵԿ թույլտվությունները կասեցվում են լիազոր մարմնի կողմից, մինչև կազմակերպության կողմից խախտումների վերացումը:

16. Որակի Խարտիայով սահմանված փոխադրումների մենեջերի, այդ թվում՝ նրա փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմնին միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունը ներկայացնում է նրա հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում:

17.Որակի Խարտիայով նախատեսված ֆինանսական վիճակին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը կազմակերպությունը լիազոր մարմնին ներկայացնում է վերջին հաշվետու տարվա տարեկան հաշվեկշռի ձևաչափով յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 30-ը: ~~Կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատելիս կարող են հաշվի առնվել նաև կազմակերպության համար հասանելի այլ ֆինանսական միջոցները, այդ թվում՝ բանկային երաշխիքը, կազմակերպության ակտիվները, շրջանառու կապիտալը, ինչպես նաև գործունեության պատասխանատվության ապահովագրությունը:~~ Եթե վերջին հաշվետու տարվա տարեկան հաշվեկշռով կազմակերպության ֆինանսական

դրությունը գնահատելիս Որակի Խարտիայով նախատեսված ֆինանսական վիճակի սահմանված պահանջը չի բավարարվում, որպես լրացուցիչ ֆինանսական միջոցներ կարող են հաշվի առնվել նաև կազմակերպության ակտիվները, շրջանառու կապիտալը, գործունեության պատասխանատվության ապահովագրությունը, ինչպես նաև բանկային երաշխիքը:

18. Սույն հոդվածի 9-րդ մասում սահմանված մասնագիտական որակավորման քննությունների ընդունման և մասնագիտական որակավորման վկայականներ տալու գործընթացը կազմակերպում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածում լրացել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդները պետք է ունենան մասնագիտական որակավորման վկայական (ՄՈՎ): ՄՈՎ ստանալու համար վարորդները պետք է անցնեն նախնական մասնագիտական վերապատրաստում և հանձնեն մասնագիտական որակավորման քննություն: ՄՈՎ ունեցող վարորդներն առնվազն հինգ տարին մեկ պարբերականությամբ պետք է անցնեն մասնագիտական վերապատրաստման դասընթաց, որի վերաբերյալ պետք է նշում կատարվի ՄՈՎ-ի վրա: Մասնագիտական որակավորման քննությունն ընդունում և վարորդի ՄՈՎ-ը տրամադրում է լիազոր մարմինը: Միջպետական փոխադրումներ իրականացնող վարորդների մասնագիտական վերապատրաստմանը ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման քննությունների հանձման կարգը և մասնագիտական որակավորման վկայականին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդների մասնագիտական վերապատրաստման գործունեություն կարող են իրականացնել <<Գործունեության իրականացման ծանուցման մասին>> օրենքի պահանջներին համապատասխան լիազոր մարմնից ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ստացած կազմակերպությունները:

6. ~~Սույն օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով~~ Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված վերապատրաստման առաջին դասընթացը վարորդը պետք է անցնի ոչ ուշ, քան ՄՈՎ-ը ստանալուց հինգ տարի հետո:»:

Հոդված 4. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 7-10-րդ, 12-18-րդ մասերի և 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ

հոդվածում լրացվող նոր 4-րդ և 6-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ օրենքի 2-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 11-րդ մասը և 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասը ուժի մեջ են մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-600-29.05.2023-ՏՀ-011/1), «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-600[1] -29.05.2023-ՏՀ-011/1), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-600[2] -29.05.2023-ՏՀ-011/1) և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-600[3] -29.05.2023-ՏՀ-011/1) վերաբերյալ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս**	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում «Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների Որակի Խարտիայով» բառերից հետո լրացնել «այսուհետ՝ Որակի Խարտիա» բառերը՝ «Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների Որակի Խարտիա» և «Որակի Խարտիա» արտահայտությունների	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			փոխարեն նույն արտահայտությունը կիրառելու նպատակով		
2	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մաս**	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ մասում «բեռնափոխադրումներ իրականացնող» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 13-րդ մաս**	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 13-րդ մասում «հանված» բառը փոխարինել «վերացված» բառով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն, դատվածությունը մարվում կամ վերացվում է:	Ընդունվել է	Ընդունվել է:
4	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ մաս**	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ մասում «Սույն հոդվածի 4-րդ մասով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 7-րդ մասով» բառերով՝ 7-րդ հոդվածի 4-րդ մասին տված հղումը շտկելու նպատակով: Առաջարկում ենք նաև նույն մասում «մինչև	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			կազմակերպության կողմից» բառերից հետո հանել «գործարար համբավի կորստին հանգեցնող» բառերը՝ հստակեցնելու նպատակով ֆինանսական վիճակի և փոխադրումների մենեջերի համար սահմանված պահանջների խախտման հիմքով կասեցված կամ մերժված դիմումների հարցը:		
5	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 17-րդ մաս**	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 17-րդ մասում «Կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատելիս կարող են հաշվի առնվել նաև կազմակերպության համար հասանելի այլ ֆինանսական միջոցները, այդ թվում՝ բանկային երաշխիքը, կազմակերպության ակտիվները, շրջանառու կապիտալը, ինչպես նաև գործունեության պատասխանատվության ապահովագրությունը:» նախադասությունը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			հետևյալ բովանդակությամբ՝ «Եթե վերջին հաշվետու տարվա տարեկան հաշվեկշռով կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատելիս Որակի Խարտիայով նախատեսված ֆինանսական վիճակի սահմանված պահանջը չի բավարարվում, որպես լրացուցիչ ֆինանսական միջոցներ կարող են հաշվի առնվել նաև կազմակերպության ակտիվները, շրջանառու կապիտալը, գործունեության պատասխանատվության ապահովագրությունը, ինչպես նաև բանկային երաշխիքը:»: Իրավական որոշակիության սկզբունքից ելնելով, անհրաժեշտ է հստակեցնել, թե որ դեպքում պետք է հաշվի առնվի կազմակերպության համար հասանելի այլ ֆինանսական միջոցները և որ դեպքում ոչ:		
6	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված 9-րդ կետ**	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 7-րդ հոդվածի 18-րդ մաս հղում է	Ընդունվել է, Կատարվել է	Ընդունվել է:

			կատարվել հոդվածի 9-րդ մասում սահմանված մասնագիտական որակավորման քննությունների ընդունման եւ մասնագիտական որակավորման վկայականներ տալու մասով: Սակայն Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 7-րդ հոդվածում լրացվող նոր՝ 9-րդ մասով սահմանված չէ որեւէ կարգավորում մասնագիտական որակավորման քննության վերաբերյալ: Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «Փոխադրումների մենեջերը պետք է ունենա մասնագիտական որակավորումը հաստատող վկայական, որը տրվում է տեսական քննության դրական արդյունքի դեպքում: Բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում վերջին 10 տարվա անընդմեջ	համապատասխան փոփոխությունը:	

			կառավարման ստաժ ունեցող անձանց մասնագիտական որակավորումը հաստատող վկայականը տրվում է առանց տեսական քննություն հանձնելու: Մասնագիտական որակավորմանը և մասնագիտական որակավորման քննություններին ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը և մասնագիտական որակավորման վկայական տալու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»		
7	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 6-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասում «Սույն օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 4-րդ» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ լրացումը կատարվում է Օրենքի հենց 28-րդ հոդվածում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

8	**ՀՀ կառավարություն**	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
9	**ՀՀ կառավարություն**	4-րդ հոդվածի առաջին մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 7-10-րդ, 12-18-րդ մասերի և 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող նոր 4-րդ և 6-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ օրենքի 2-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածում լրացվող 11-րդ մասը և 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասը ուժի մեջ են մտնում սույն օրենքն ուժի մեջ	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			մտնելուց վեց ամիս հետո:»: Որոշ դրույթների համար առաջարկվում է սահմանել հստակ ժամկետներ, որոնց ընթացքում ներկայումս միջպետական փոխադրումներ իրականացնողները պետք է իրականացնեն Նախագծով իրենց վրա դրված նոր պարտականությունները՝ առանց բացասական հետեւանքների:		
10	**ՀՀ կառավարություն**	4-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը, ինչպես նաև նույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հասկացություններ կամ տերմիններ»:		
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1	***ՀՀ կառավարություն***	Վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում է «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով, որ նախագծում կատարվում են մի քանի լրացումներ:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2	***ՀՀ կառավարություն***	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի 20-րդ հոդվածի նոր լրացվող 59-62-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «59. Փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման քննություն ընդունելու համար՝ բազային տուրքի 15-ապատիկի չափով 60. Փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման վկայական տալու համար՝ բազային տուրքի 5-ապատիկի չափով 61. «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդների մասնագիտական որակավորման քննություն ընդունելու համար՝ բազային տուրքի 15-ապատիկի չափով: 62. «C», «D», «CE», «DE», «C1E» և «D1E» կարգ ունեցող վարորդների մասնագիտական	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			որակավորման վկայական տալու համար՝ բազային տուրքի 5-ապատիկի չափով:»: Ինչպես նաև առաջարկում ենք 1-ին հոդվածը լրացնել նոր 2-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ 2)20.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 18-րդ և 19-րդ կետերով. 18) Փոխադրումների մենեջերների մասնագիտական վերապատրաստման ծառայության մատուցման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով:»: 19) Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող վարորդների մասնագիտական վերապատրաստման ծառայության մատուցման համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով:»: Կատարվող փոփոխությունների հիմնական նպատակն է տարանջատել մասնագիտական որակավորման քննություն տալու և մասնագիտական որակավորման վկայական ստանալու պետական տուրքերի կարգավորումը:		

3.	***ՀՀ Կառավարություն***	2-րդ հոդված	«Հրապարակման հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «հրապարակումից վեց ամիս հետո» բառերով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» բառերը շարադրել առանց չակերտների, իսկ «1985 թվականի դեկտեմբերի 6-ի» բառերը շարադրել «Վարչական» բառից առաջ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 137 8-րդ հոդվածի 8-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 137 8-րդ հոդվածի 8-րդ մասում «տեղեկատվությունը» բառից հետո լրացնել «սահմանված ժամկետում» բառերը: Անհրաժեշտ է նշել, որ միայն վերոնշյալ ժամկետի ընթացքում համապատասխան տեղեկատվությունը լիազոր մարմնին չտրամադրելն հանգեցնում է վարչական պատասխանատվության:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդվածով	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 137 8-րդ	Ընդունվել է: Կատարվել է	Ընդունվել է:

		լրացվող Օրենքի 137 8-րդ հոդվածի 9-րդ մաս	հոդվածի 9-րդ մասում Հանել «(ՏՆԵԿ)» կրճատ տարբերակը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այն Օրենսգրքում այլևս չի կիրառվում:	համապատասխան փոփոխությունը:	
«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1"	***ՀՀ կառավարություն***	2-րդ հոդված	«Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նոր գործունեու-թյունը ծանուցման ենթակա կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը պաշտոնապես հրա-պարակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո: Ուստի վերոնշյալ գործունեության տեսակների մասով նախա-գծերով առաջարկ-վող կար-գավորումների ուժի մեջ մտնելու ժամկետը առաջարկում ենք փոխել: Ուստի, նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակման օրվան հաջորդող	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			տասներորդ օրը» բառերը առաջարկում ենք փոխարինել «հրապարակումից վեց ամիս հետո» բառերով:		